



ՀԲՄ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄՎԵԼ ՃԶՄԱՉՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՆՈՐ, 2015 ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

29.12.2014

Միբելի բանկային աշխատողներ,



շուտով անցյալում կմնա 2014 թվականը, որը բանկերի համար լի էր ինչպես նոր հաջողություններով և հետաքրքիր նախաձեռնություններով, այնպես էլ նոր մարտահրավերներով և անհանգստություններով: Արդեն պարզ է, որ Նոր տարում մեզ բոլորիս սպասվում է ծանր և համառ աշխատանք, որի արդյունքները կունենանք հետագայում:

Թույլ տվեք շնորհավորել Ձեզ Ամանորի և Սուրբ Ծննդի կապակցությամբ և մաղթել եկող Կանաչ (Կապույտ) Այծի տարում ամենայն բարիք բոլոր

ասպարեզներում:

Ցանկանում եմ Ձեզ և Ձեր ընտանիքներին առողջություն, երջանկություն անձնական կյանքում և հաջողություններ մասնագիտական գործունեությունում:

Թող ձեր կյանքում միշտ լինեն միայն դրական թվեր և զգացմունքներ, իսկ արդյունքները՝ տպավորիչ: Եվ նաև արժանի ներդրումներ, զգալի շահույթներ: Ձերմություն՝ն, կայունություն՝ն, հանգստություն՝ն:



“THE BANKER”-Ը ԱՌԱՆՁՆԱՑՐԵՑ ԱՐԴՇԻՆԲԱՆԿԻՆ

27.11.2014



Ardshinbank

Մենք ուժեղ ենք միասին

Նոյեմբերի 27-ին «Արդշինբանկ» ՓԲԸ-ն հեղինակավոր Financial Times-ի «The Banker» ամսագրի կողմից ճանաչվեց Հայաստանի 2014թ. «Տարվա բանկ»:

Տարվա բանկ ճանաչվելու կապակցությամբ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի վարչության նախագահ Մհեր Գրիգորյանը նշեց.

«Բանկի նվաճումները, որոնք հաշվի են առնվել «The Banker» ամսագրի կողմից, կրկին ապացուցեցին, որ Բանկը կայուն զարգացման և առաջընթացի ճիշտ ուղի է ընտրել»:

ՀՀ բանկային համակարգում Արդշինբանկն առաջատար դիրքեր է ամրապնդել ի շնորհիվ իր հաճախորդների և գործընկերների հետ փոխշահավետ և արդյունավետ համագործակցության, միջազգային լավագույն փորձի և սկզբունքների:

ՎՏԲ-Ի ՔԱՐՏՍԱՅԻՆ ԲԻԶՆԵՍԸ

03.12.2014



ՎՏԲ-Հայաստան Բանկի թողարկած վճարային քարտերի քանակն այս տարեակգրի համեմատ աճել է 20%-ով՝ կազմելով 368 հազ., ինչի արդյունքում բանկը շարունակում է մնալ ՀՀ քարտային շուկայի առաջատար թողարկված քարտերի քանակով:

Հայաստանի ողջ տարածքում տեղադրված ՎՏԲ-Հայաստան Բանկի 157 բանկոմատների միջոցով հաճախորդներն իրենց քարտերի միջոցով կարող են կատարել տարբեր գործարքներ՝ գումար կանխիկացնելուց մինչև կոմունալ վճարումներ և ՎՏԲ-Հայաստան Բանկի VISA քարտերից ակնթարթային դրամական փոխանցումներ տեղական և միջազգային բանկերի կողմից թողարկված VISA քարտերին:

Բանկոմատների վերջերս տեղի ունեցած միավորման արդյունքում ՎՏԲ-Հայաստան Բանկի հաճախորդները կարող են օգտվել նաև ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ-ի բանկոմատներից նույն սակագներով, ինչ «սեփական» բանկի բանկոմատներից:

Անկանխիկ վճարումների ծավալի ավելացման նպատակով բանկը Visa և MasterCard վճարային համակարգերի հետ միասին անցկացնում է մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ նաև խթանող արշավներ: 2014թ. ՎՏԲ-Հայաստան Բանկն իր VISA

քարտապանների շրջանում անկացրեց հերթական «Ամառը ՎՏԲ-ի հետ» ակցիան, որի հաղթողը շահեց ուղևորություն դեպի Մալթա երկու անձի համար: Բանկի MasterCard քարտապանները մասնակցեցին «Ղեկին ՎՏԲ-ի հետ» ակցիային, որի շրջանակում ակտիվ մասնակիցներից մեկը շահեց ավտոմեքենա:

ԵՏՄ-Ի ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ ԴԵՌԵՎՍ ՀՐԱՏԱՊ ԶԷ

05.12.2014



ԵՏՄ տարածքում միասնական արժույթի ներդրման հարցի քննարկման պայմաններ դեռ չկան, Երևանում ասաց Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամ-նախարար Տատյանա Վալովայան:

«Մեզ համար հիմա ավելի կարևոր է քննարկել ֆինանսական շուկաներում համաձայնեցված գործողությունների հարցերը, 2025 թ.-ին միասնական ֆինանսական շուկայի ստեղծման խնդիր կա, և մենք կարծում ենք, որ դա ավելի ճիշտ մոտեցում է», – ասաց Վալովայան:

Նա նաև նշեց, որ երկրները ԵՏՄ-ի շրջանակում ուսումնասիրում են եվրոպական փորձն այս ոլորտում՝ «սխալները չկրկնելու համար»:

ԱՐԴՇԻՆԲԱՆԿԸ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ Է ԹՈՂԱՐԿԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

09.12.2014



Ardshinbank

Մենք ուժեղ ենք միասին

2014 թվականի դեկտեմբերի 9-ին Արդշինբանկը առաջինը Հայաստանի մասնավոր ընկերություններից թողարկել է պարտատոմսեր միջազգային ֆինանսական շուկայում և ներգրավել 75 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսական միջոցներ:

Արդշինբանկը տեղաբաշխել է իր 3 տարի ժամկետայնությամբ պարտատոմսերը J.P.Morgan ներդրումային բանկի օժանդակությամբ, որն եղել է թողարկման Գլխավոր Տեղաբաշխողը: Moody's վարկանշային գործակալությունը Արդշինբանկի պարտատոմսերի այս թողարկմանը շնորհել է Ba2 վարկանիշ՝ բանկի ներկայիս Ba3 վարկանիշից մեկ աստիճան բարձր: Պարտատոմսերը ցուցակված են Վիեննայի ֆոնդային բորսայում, իսկ պարտատոմսերի քլիրինգն իրականացվում է Euroclear-ի և Clearstream-ի

համակարգերում: Պարտատոմսերի թողարկումից ստացված միջոցներն ուղղվելու են բանկի ռազմավարությամբ նախատեսված գործառնությունների ընդլայնմանը:

«Մենք հպարտ ենք, որ Արդշինբանկը Հայաստանում առաջին ոչ պետական կառույցն է, որը կարողացել է պարտատոմսեր տեղաբաշխել միջազգային կապիտալի շուկաներում: Սա կարևոր ձեռքբերում է ոչ միայն մեր բանկի, այլև մեր երկրի համար, քանի որ այն օգնում է Հայաստանի մասնավոր ընկերություններին գտնել իրենց տեղը միջազգային ֆինանսական «քարտեզի» վրա», - ասել է «Արդշինբանկ» ՓԲԸ վարչության նախագահ Մհեր Գրիգորյանը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ uba@uba.am: